ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

Ք. Երևան, 29 նոյեմբերի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցում են՝

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Խոջոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

1. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

Հարցի վերաբերյալ անդամները ներկայացրել են հետևյալ դիրքորոշումները՝

➢ **Արթուր Ասոյան** - ներկայացված ծրագիրը համապատասխանեցնել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 2.1-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներին, մասնավորապես՝ լրացնել յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտում անցկացված վերջին ստուգման ավարտի ամսաթիվը և ստուգման անցկացման ժամանակահատվածը, ինչպես նաև ստուգումների ընդհանուր քանակը՝ ըստ ռիսկայնության:

Առաջարկությունն ընդունվել է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի նախագծում կատարվել են համապատասխան լրացումները:

➢ **Մելինե Բեգլարյան** - Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը կազմելիս՝ ինչպես է որոշվել տնտեսվարող սուբյեկտների ռիսկայնությունը, երբ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված մեթոդաբանության մեջ ռիսկայնության բարձր, միջին և ցածր խմբերի համար որոշման միավորների միջակայք/շեմային միավորներ ներառված չեն:

Հայտնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 28-ը նոյեմբերի 2019 թվականի N 1687-Ն որոշման 19-րդ և 20-րդ կետերի՝ Տեսչական մարմինը վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկություններ՝ իր վերահսկման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ: Տվյալների բազայի ձևավորման

համար անհրաժեշտ տեղեկությունները հավաքագրվում են տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների իրականացման արդյունքում առկա տեղեկատվությունից, ստուգում իրականացնող պետական մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից իրենց տվյալների փոփոխման արդյունքում տվյալների բազաներում առկա համապատասխան տեղեկություններից:

- Տվյալների բազայի նպատակն է որոշել և դասակարգել Տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ առկա տեղեկությունների և սահմանված չափորոշիչների հիման վրա:

Համաձայն նույն մեթոդաբանության 16 , 17 կետերի

-Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման՝ տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում (ըստ ռիսկայնության աստիճանի նվազման)՝

1) բարձր ռիսկայնության.

2) միջին ռիսկայնության.

3) ցածր ռիսկայնության:

- Բարձր ռիսկայնության խմբում ընդգրկվում է ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև քսան տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի նվազման:

- Ցածր ռիսկայնության խմբում ընդգրկվում է ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև երեսուն տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի աճման:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:

2. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

Արթուր Ասոյան - Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի /այսուհետ՝ Ծրագիր/ անհրաժեշտ է լրամշակել և «Տեսչական մարմինների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետի պահանջներին: Մասնավորապես, ներկայացված Ծրագրում առկա են հետևյալ թերությունները.

➢ Ծրագրի 2-րդ գլխում ներկայացված են վերահսկողության 4 հիմնական ոլորտ, սակայն սահմանային պետական վերահսկողությունը չի հանդիսանում վերահսկողության ոլորտ, այն հանդիսանում է պետական վերահսկողության ձևերից մեկը:

➢ Ծրագրի «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ենթագլխում լեյշմանիոզ հիվանդությունը ներկայացված է որպես հանրային առողջապահության գերակա խնդիրներից մեկը, սակայն արձանագրված դեպքերի վերաբերյալ վերջին տեղեկատվությունը 2017-2018 թվականների համար է: Միաժամանակ, դաբաղ հիվանդության կանխարգելման հետ կապված հողում է կատարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի նիստի թիվ 6 արձանագրային որոշմանը, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում դաբաղ հիվանդության շճահետազոտության 2018-2021 թվականների ռազմավարական ծրագիրը, սակայն այդ ծրագիրը հաստատված է 2018-2020 թվականների համար: Անհրաժեշտ է հստակեցնել, արդյո՞ք առկա է նման ծրագիր 2021 թվականի համար:

➢ Ծրագրի «ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱ» ենթագլխում բացակայում է տեղեկատվություն բացահայտված ռիսկերի մասին:

➢ Ծրագրի N1 հավելվածի 16-րդ տողում բացակայում է ներկայացված միջոցառման ակնկալվող արդյունքը:

Առաջարկություններն ընդունվել են, ծրագիրը լրամշակվել է:

➢ Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

3. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

4. «Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

➢ **Մելինե Բեգլարյան** - Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի «2. Սահմանումներ և եզրույթներ» բաժնում առաջարկում եմ ներառել նաև «Ռեֆերենս փորձարկման լաբորատորիա» հասկացությունը/սահմանումը:

Առաջարկությունն ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան լրացումը:

Մելինե Բեգլարյան - Արդյոք կա իրավական փաստաթուղթ, որը սահմանում/թույլատրում է Լիազոր մարմնի ղեկավարին հաստատելու ռեֆերենս լաբորատորիայի նշանակման գործընթացում ներառված աշխատանքային խմբի կազմը և աշխատակարգը:

Հայտնում եմ, որ համաձայն «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիան նշանակվում է Կառավարության սահմանած կարգով: Արդյունքում կառավարությունն իրավասու է սահմանել նշանակման գործընթացը և նշանակող մարմինը:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ «Սննդամթերքի անվտանգության ոլորտում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիայի նշանակման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

5. «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2017 թվականի հունիսի 15-ի N 662-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ:

➢ **Արթուր Ասոյան** - «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների

ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2017 թվականի հունիսի 15-ի N 662-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Նախագծում առկա են հետևյալ թերությունները.

- ստուգաթերթերի փորձարկումը կատարված չէ
- հարցաշարում ներկայացված «Հարցերը» դաշտերը խմբագրել, քանի որ հարցերը ըստ էության չեն ենթադրում որևէ պատասխան (օրինակ՝ հարցերը կարող են սկսվել «արդյո՞ք» բառով),
- բոլոր ստուգաթերթերի հարցաշարերի վերջում նշել այն բոլոր իրավական ակտերը, որոնց հիման վրա կազմվել են ստուգաթերթերը,
- հարցաշարում հարցերը և դրանցից ծագող և կապված ենթահարցերը ներկայացված են որպես մեկ հարց, որը ստանում է համապատասխան մեկ կշիռ, ինչը իր հերթին սխալ է, քանի որ յուրաքանչյուր հարց պետք է կշռված լինի՝ օրինակ, արտադրական կազմակերպությունների, ճարպայուղային արտադրանքի արտադրության կազմակերպությունների, ձկնամթերքի արտադրական կազմակերպությունների, փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրի արտադրական կազմակերպությունների համար ստուգաթերթերը:

Օրինակ՝

1.3.	Արտադրական շինությունները, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը) սարքավորված են՝ 1) բնական և մեխանիկական օդափոխության միջոցներով, որոնց քանակը և (կամ) հզորությունը, կառուցվածքը և գործարկումը թույլ են տալիս խուսափել սննդամթերքի				1	ակնադիտական զննում	ՄՄ ՏԿ 021/2011 կանոնակարգի 1-րդ հոդվածի 4-րդ կետի 2, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4 -րդ ենթակետեր	

	աղտոտումից, ինչպես նաև ապահովում են նշված համակարգերի ֆիլտրերի և մաքրման ու փոխման ենթակա այլ մասերի հասանելիությունը. 2) բնական կամ արհեստական լուսավորվածությամբ. 3) սանհանգույցներով, որոնց դռները չեն բացվում դեպի արտադրական շինություն և սարքավորված են մինչև նախամուտք մտնելուց առաջ աշխատանքային համազգեստի համար կախիչներով, ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով. 4) ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով՝ տաք և սառը ջրով, ձեռքերը լվանալու միջոցներով և ձեռքերը սրբելու և (կամ) չորացնելու համար նախատեսված սարքերով:							

Հայտնում եմ, որ ստուգաթերթերը փորձարկվել են, կիրառելի են և դրանց հիման վրա կիրականացվի լիարժեք պետական վերահսկողություն:

Միաժամանակ հայտնում եմ, որ ստուգաթերթերը մշակվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի պահանջներին համապատասխան և որպես օրինակ են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1423-Ն և 2020 թվականի ապրիլի 30-ի թիվ 718-Ն որոշումները: Նշված նորմատիվ իրավական ակտերով հաստատված են համապատասխանաբար ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ստուգաթերթերը: Ստուգաթերթերում կշիռը սահմանելիս հաշվի են առնված նաև ենթահարցերը:

Միաժամանակ հայտնում եմ, որ առաջարկությունն ընդունվել է և Տեսչական մարմինը պատրաստ է մեկ անգամ ևս փորձարկել ստուգաթերթերը, մինչ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:

➢ **Մելինե Բեգլարյան** - Նախորդ հանդիպման ժամանակ քննարկվեց նաև ստուգաթերթերի փոփոխված տարբերակների փորձնական կիրառումն արտադրական պայմաններում: Արդյո՞ք դա իրականացվել է. եթե՝ այո, ապա ինչ եզրահանգումներ կամ դրանցից բխող փոփոխություններ են արվել ստուգաթերթերի՝ ներկայացված տարբերակներում:

Հայտնում եմ, որ ստուգաթերթերը փորձարկվել են, կիրառելի են և դրանց հիման վրա կիրականացվի լիարժեք պետական վերահսկողություն:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 7 կողմ և 1 դեմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2017 թվականի հունիսի 15-ի N 662-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին

6. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվության նախագծին:

7. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը:

8. Տեսչական մարմնի 2021 թվականի երկրորդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

- Մելինե Բեգլարյան «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքները» փաստաթղթի վերաբերյալ հայտնում եմ նույն նկատառումն, ինչ անցյալ անգամ (քանի որ ըստ էության հաշվի չի առնվել): Մեջբերում՝ «ներկայացված նախագծի վերաբերյալ նշեմ, որ ցանկալի է նաև յուրաքանչյուր բաժնում ըստ չափորոշիչների իրականացված գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել ամփոփիչ նկարագիր: Այսինքն՝ ցուցանիշի միայն թվային արժեքը նշելուց բացի ներկայացնել նաև վերջինիս բովանդակային նշանակությունը, օրինակ՝ այդ ցուցանիշի բավարար կամ անբավարար լինելը, ինչպես նաև համապատասխան բացթողումների (եթե կան այդպիսիք, օրինակ՝ պլանավորված ստուգումների մասով) շտկմանը և աշխատանքների բարելավմանն ուղղված գործողությունները:»:

Հայտնում եմ, որ հաշվի առնելով, որ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման վարչությունը ձևավորվել և աշխատում է

2020 թվականի մայիս ամսից, իսկ Տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանությունը կառավարման խորհրդի կողմից հաստատվել է 2020 թվականի օգոստոսի 13-ին, որակի ապահովման վարչության կողմից Տեսչական մարմնի կատարողականի գնահատում կատարվել է 2020 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համաձայն կատարողականի գնահատման մեթոդաբանության՝ յուրաքանչյուր եռամսյակի արդյունքը համեմատվում է նախորդ տարվա նույն եռամսյակի արդյունքի հետ, ուստի համեմատումը հնարավոր կլինի իրականացնել 3-րդ և 4-րդ եռամսյակների համար, ինչը կառավարման խորհրդի քննարկմանը կներկայացվի որակի ապահովման վարչության 2021 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը ներկայացնելու ժամանակ:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Տեսչական մարմնի 2021 թվականի երկրորդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

9. Տեսչական մարմնի 2021 թվականի երրորդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի 8 անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Տեսչական մարմնի 2021 թվականի երրորդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Միաժամանակ Խորհրդի նախագահը, Խորհրդի անդամներ Ա.Ասոյանը, Լ.Նանուշյանը և Ա. Առաքելյանը, կարևորելով հանրապետությունում արձանագրված սննդային թունավորումների դեպքերի քննարկումը, առաջարկել են անցկացնել Խորհրդի առկա նիստ:

Առաջարկությունների հիման վրա 2021 թվականի դեկտեմբերի 9-ին ժամը 14.00-ին կանկացվի Խորհրդի հերթական նիստ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ